ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 30.06.2016թ.

Ո Ր Ո Շ Ու Մ

ԳԲԽ-72/16 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-72/16 բողոքը քննող հանձնաժողովը, գործելով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Խաչպար» ՍՊԸ-ի 2016 թվականի հունիսի 24-ի բողոքով ԳԲԽ-72/16 բողոքը քննող հանձնաժողովին ներկայացրած միջնորդությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչպար» ՍՊԸ-ի 2016 թվականի հունիսի 24-ի բողոքով ԳԲԽ-72/16 բողոքը քննող հանձնաժողովին ներկայացրած՝ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» (այսուհետ՝ Ընթացակարգ) ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի կողմերի միջև պայմանագրի կնքման գործընթացը՝ թիվ 2, 50, 51, 52 և 53 չափաբաժինների մասով, կասեցնելու վերաբերյալ ժամանակավոր միջոց կիրառելու միջնորդությունը բավարարել:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Անդամներ՝ **Ռոման Մարդոյան**

Մարտիկ Նալբանդյան